

# ԶԱՄՐՁԱԽՈՍԴԻՔ ՅՈՒՆԻՉԵՐ

## 133. ԿԱՐՈՅԱՆՑ ԶԱՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կարոյանց Զաքարը շատ խմոր էր, մի մարդ վրեն խոսում ա խմելու հմար: Օրերից մի օր Կարոյանց Զաքարը բազարումը նստած ա ըլում, եղ մարդը անց ա կենում, Զաքարը ժափ ա տալի, ասում ա. – Այ մարդիկ, խոտը հնձում են, դնում են կապոն,

Վրասիթ սելին քսում են սապոն,  
Հլա տեսնք ինչ վրա ո՞վ ա խոսում,  
Բահան դուդոն, Քալաշա ապոն:

2. Կարոյանց Զաքարի հերը մի երինջ ա պահում: Գարունքագլուխ խտոր հատնում ա, տերտերն ել մի բլուր խոտ ա ունենում, գնում ա խնդրում ա, չի տալիս: Եղով գիշերը վեզ ա կենում, մի թոկը վեր ա ունում, տանում եղ ոլուրի տակն ա դնում, ասում ա. – Քիչ տանեմ, քիչ կըլի, շատ տանեմ, խոսք ու զրից կըլի, կաց բոլորը տանեմ, ոչ խոսք կըլի, ոչ գրուց:

Ամբողջ բլուրը վեր ա ունում, բերում:

3. Կարոյանց Զաքարը, Աև ծովը որ առնում են, կամավոր ա ըլնում: Իրան աճածական օֆիցեր ա ունենում ընդի, գընըմ ա մեծ քաջագործություններ ա անըմ: Յրաշալի գյուլլա գցող էր, օդումը թոշունին խփում էր: Կամավոր վախտը ենդի քաջագործություններ էր արել, որ պոլնի կավալեր, չորս Գլորգևսկի խաչ էին տվել: Որ կրպից գալիս ա տուն՝ մասխարություններ շատ ա ամըմ: Մի անգամ էլ գընըմ ա ուրիշի հմա խոտ հնձելու: Լոռումն ել անձրես որ սկսում ա, գիշեր-ցերեկ կոթաշաղ ա գալի: Օրով աշխատում ա, հացն ուտում ա, հախն առնըմ: Ասում ա. – Օխա՛յ, էս իմ օրն ա:

Եղ բանը հմի էլ ժողովուրդը հիշում ա, որ անձրես ա, կոթաշաղ ա, ասում ա՝ Կարոյանց Զաքարի կոթաշաղն ա:

## 134. ՊԱՐՏՆՈՅ ԶԻՉԻ ԵՎ ԹԵՎՈՍԻ ՕՅԻՆՆԵՐԸ

1. Զալալօղլում մի հատ պարտնոյ կար, պառավ մարդ էր, խմոր, ավել անունը Զիգի էին ասում: Դա խմում ա, գիշերները գնում ա որան տեղումը քնում ա: Թալվարը շինած դրանը, թալվարի տակին տեղը գցած, տանը քնած են վաղուց: Զալալօղլու մասխարաներից թեսուր տեսնում ա, որ Զիգին հարբած գնում ա դոանը պիտի քնի. առաջ-առաջ գնում ա, յորդանը բարձրացնում ա, տակին պառկում, յորդանը քաշում գլուխուց: Խեղճ Զիգին գնում ա, տեսնում ա յորդանի տակին մարդ կա, հենց իմանում ա կնիկն ա, կարոտել ա, եկել ա իրան մոտ, շորերը հանում ա, վրաս յորդանը բարձրացնում ա ու վրա պրծնում, որ պաչի. Թեսուրի բեխերը ընկնում ա բերանը:

2. Թեսուր չալ փափախ ա դընըմ: Սա իրաթյան մարդկանցով Սուրբ Աստվածածին ուխսու: Տեսնում ա մի խումբ կնանիք են գայի. մի գեղեցկուիկի հարսն կա, որ ուղդակի կրակ ա: Ասում են «Այ աա, ինչ սիրուն ա»: Թեսուն ասում ա. – Ուգում ի ես գնամ դրան պիսչեմ:

– Այ տա, ո՞նց կըլի, – ասում են ընկերները:

Դրանց թողում ա ու գնում փթաթվում են հարսին. – Կա՞. ո՞նց ես, վայ ձերոնք ո՞նց են, – ու սկսում ա պաչել:

Կնանիք զարմանում են, թե՝ էս ո՞վ ա, ինչ ա:

Թեսուր պաշում ա սիրուն հարսին ու թողնում, գնում: Մարդիկ լիքն են, եկել են սաղ գեղերից, սուփրաները գցած, քեֆ են անում: Էն սիրուն հարսի մարդը, բարեկամները իմանում են էր բանը, հարց ու փորձ են անում թե՝ էր ո՞վ էր: Բա մի չալ փափախավոր էր:

Դմա թեսուր իր փափախը հանել էր դրեւ ուրիշ գյուղացու գլուխուց: Նրանը իրանը: Էղ

մարդիկ գալիս են անմեղ չալ փափախավորին տուր թե կտաս:

Թևոսը ազատվում ա:

### 135. ՑԵՑՈԱՆՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ցեցուանց Ալեքսանդր վարպետ էր ապակեգործ և ներկարար: Միտքը դուք պյակվիլ: Իմացավ, որ Լեջան մի լավ աղջիկ կա, լավ մոր աղջիկ: Ուզում էր, որ համ սիրուն ըլի, համ հալալ:

Զութքեց, ծին նստեց, գնաց Լեջան, հարցնելով տունը գտավ, հայաթումը կայնեց, որ մարդ դուրս գա, իմանա: Եղ աղջիկը դուրս էկավ: Աղջիկը գլխի ընկավ, որ եղ տղան իրան հմար ա էկել: Դեմքը զննեց, տեհավ, ոք չէ, գժագրությունը լավը չի, դուր չէկավ:

– Աղջի ջան, – ասավ, – ես ու՞մ տունն ա:

– Մեր տունն ա, ու՞ն տունն ա:

– Բա դու ու՞ն աղջիկն ես:

Թե. – ես տան աղջիկն եմ:

– Մերդ տա՞նն ա:

– Բա հո՞չ չոլումը չի:

– Բա հերդ ու՞ր ա գնացել:

– Գնացել ա անտառ, որ մի աչա փետ կտրի, ուրի չանիդ տակին սուն տա, տեսնում եմ, որ շատ ես հետաքրքրվում, պելացել ես, ձեռքի հոգնած կըլի:

Ասում ա, փախչում, մտնում տուն: Ալեքսանդր փոր փոշման, գլուխը կախ գալիս ա տուն:

2. Ալեքսանդր արհեստավոր էր, մասինարա ու հնարագետ: Իրան հմար ժեշտի թևեր ա շինում, ասում ա. «Ես թևերով Զալալօլու ջովեժի ծորումը մի բարձր տեղից պտի թռչեմ, որ դեղ որ վեր գամ, եղ հողը ինձ պտիք տա»:

Զալուկի շարաթն ա, ժողովուրոջ գաթա ա թիում փռումը, դարրինն էլ խոտն ա կրակ շինել, որ գարունքը աշունք լինի, դիփունքը բան-գործ թոգնում են, տեսնին ոնց ա թռչելու:

Ալեքսանդր դուրս ա գալի վիանիցը, էլի եղ մտնում վոանը: Ժողովուրոջ հավաքվում ա ծո-

րի գլուխը: Են ա ասում են վայ թե թռչի սիսաթվի, բան. մեղք են գալի, ասում են. «Դա լավ եղ տեղը տվինք քեզ»:

3. Մի օր էլ Ալեքսանդր ընգերոջ հետ գնում ա իին Ղարաքիլիսեն մասինարություն անելու: Դին Ղարաքիլիսում ժողովողին ասում են, որ մի մարդ ա էկել, որ կարա մտնի շշի մեջը, ու ժողովողի վրա տոմսեր են ծախում: Մարդիկ զարմանում են, թե մարդը ոնց կմտնի շշի մեջ, և վոագ-վոագ տոմս են առնում ու հավաքվում դպրոցում: Սպասում են, սպասում են մարդը չկա: Մեկ էլ հետևի դռնից շիշը ձեռքին երևամ ա Ալեքսանդր: Դիմելով ժողովողին, նա ասում ա. – Այ ժողովուրոջ, մարդը կարա ես շշի մեջը մտնի:

Ժողովուրոջ թե չի կարա:

– Բա որ չի կարա, ուր եք հավաքվել: Ընը, ես մտա շշի մեջը, – ասում ա, իրա անունը թղթի վրա գրում ա, գցում ա շշի մեջ, փողերն առնում ա, յալլա, դուս գալի, փախչում:

### 136. ԽԱՆԱՂՅԱՆՆԵՐԸ ՄՐԱՎՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մեզ մոտ՝ Լոռում, Խանաղյաններ կսյին, մեծ մարդիկ ին: Մեկը պրիստավ էր, հետո էլ ույեզդի նաշալնիկ դառավ Ծրեվան, անունը Եգոր աղա էին ասում. Կնիկն էլ սիրուն, իւելոք, անունը՝ Նաթել: Եգոր աղան մի տարի, ույեզդի նաշալնիկ եղած վախտը, ֆայտոնով գընըմ ա Իգդիր: ճանսապարին աշտարակցի մի մասինարա պառավ մարդ ա պատահում: Եգոր աղեն կանգնացնում ա եղ մարդին, որ մի հետաքրքիր բան ասի, որ լսած չըլնի:

– Աղա, – ասում ա մասինարեն, – ամեն ուան ասել եմ, լսել եմ, էլ բան չի մնացել:

– Չէ, պտես ասիլ, թողալ չեմ գնաս, մինչև չասես:

Տենում ա, որ էլ չի կարա պրծնի դրանից, ասում ա. – Խանըմի կշտին չեմ կարալ ասի, իւանըմը նստած ա:

Աղեն ասում ա. – Դենց խանըմի կշտին եմ ուզում ասես:

Տեսում ա, որ էյղաթ չկա, ասում ա. – Աղա. աշխարհը ծով դառնա, ես էլ մեջքիս Վրա տկլոր ջրի միջին պառկած ըլեմ, իյանըմըն էլ ինեխտվելուս ըլի, որդեղ նստի:

Աղեն մի ոսկի ա տալի, ասում ա. – Դե գնա:

2.Օրերից մի օր էլ գյուղից մր հասակով ծանոթ մարդ գործով գալիս ա, նվեր ա բերում Եգոր աղին: Առաջ տներումը շալով շալվար էին գործում, եղ մարդը բոլ մեղր ա ումենում, մեղրը փաթաթում ա, շալվարի փոխկերն ա դնում, իյուրցինի դայդա ուսն ա գցում ու բերում: Աղին բարեսում ա, շալվարն ուսիցը վեր ա բերում, թե. – Աղա ջան, շալվարինս քեզ փեշքաշ:

Աղեն վրազ ձեն ա տալի, թե. – Նաթել, Նաթել, իյա ըստի արի:

Կնիկը գալիս ա, ասում ա. – Հյա մեկ էլ ասա, ի՞նչ ես բերել:

Բիծեն, թե. – Աղա ջան, շալվարինս քեզ փեշքաշ:

չկա. ճանճերն են սերմը կերել: ճանճերը պետք ա հետ ածեիք մինչև սերմը ծլեր, ընդուց Եղնա ինչղար ճանճ Վրա թափվեր՝ բան չկար»: «Բա ի՞նչ անենք»: Երկրորդ անգամ իւարվեց կուրթանցին. մին էլ առավ աղի սերմը, բերուց թագա ցանուց ու ախապորը ղրգեց հողի մի ծերո. ինքը՝ մի ծերո, հսկում էին, որ ճանճերը աղն ուտեն ոչ: Աին էլ ըհը, մեկի ճակատին մի ճանճ էրեաց. ախապորը ծեն տվուց՝ Է՛յ, Համբո, շվացրուց ու ծեռով շանց տվուց ճանճի վեր էկած տեղը: Էս էլ ընդիհան բոնեց, մթամ թե ոը ճանճի Վրա կրակի, տվուց ախապորը շուտ տվուց: Եղ մեյիդի Վրա պատմեցին, թե սիեսին, աղի սերմն են ցանե, ճանճի հմա խփել ա, դիպել ա ախապորը: Գիդուն մարդիկ էլ գդնվեցին, ասեցին՝ ծեզ իւարել են, աղին սերմ չկա, անտեղի էլ մարդին կորուստ էք տվել: Համբո անունը դրանց շատ ղժվար էկավ, վերացրեցին. ինչղար մեծ մարդ կար, մնաց Համբո, չուր էլ մեռան, հատան, իսկ փոքրեցի ոչ մեկի անունը Համբո չղրին: Շատ վախտ էղ գյուղին ասըմ են՝ Համբոգրադ, հմի ոչ մի Համբո չես գդնի էնդի, ոը Համբո ասես, Է՛, գեղումը քեզ կսպանեն:

### 137. ԿՈՒՐԹԱՆՑՈՅՑ ՄՐԱՄՏԱԿԹՅՈՒՆԵՐԸ

1. Կուրթան գյուղում առաջներումը շատ Համբարձում անուններ կար, ըրեխանց անունը Համբարձում էին դնում: Համբարձում յայլա Վարդեկորի կապակցությամբ դրանք էլ անունը սիրել էին ու եղ կարգով էլ Համբարձում էին որել ըրեխանց անունը, Համբարձումն էլ կիսատ Համբո էր դառել:

Եղ Համբոքերից մինը գընըմ ա Ալեքպու, տենըմ ա մանղըր աղ են ծախըմ: Էս ի՞նչ ա: Ալեքպոլցին իյարում ա, թե՝ աղի սերմ ա: Ատքումն ասըմ ա. «Մենք ամեն տարի աղ ենք առնում»: Էժան առնըմ ա, ասըմ ա, տանենք, ցանենք, մշտական աղ կունենանք: Աղը բերում ա գյուղ ու ցանում են. մի քիչ վախտից եղը գընըմ ա ստուգում, որ եղ աղը չկա, դե աղը անձրեսից հալվում ա, հողի հետ մերվրւմ, կորչում: Վեր ա կենըմ, գընըմ ա Ալեքպու թե. «Ախապեր ջան, ինծ իյաբել են, էն աղի սերմը որ տարա, դուս չեկավ»: Ալեքպոլցին էլ թե. «Կա

### ԿՈՒՐԹԱՆՑՈՅՑ ՄՐԱՄՏԱԿԹՅՈՒՆԵՐԸ

2. Լոռու Կուրթանին Համբոյի գեղ էին ասում: Եղ գեղում Համբո անուն որ տաս, գեղացիք նեղանում են, ուշունց են տալի: Օրերից մի օր գործկոմի նախագահը գեղի միջովն ա գրնըմ: Նախագահի կողքին էլ կնիկը՝ ռուս, սիրուն մի հարս: Էն նախագեն սիւալվում ա, ասում ա՝ Համբո:

Գեղացիք եղ են դառնում, թե. – Համբոն կողքինիդ ...

3. Կուրթանցիք գոմ են շինում, կրիշը ծածկում, գեղինը ղզելու ժամանակ ոը հավաքված ֆողը դուս են գցում, մի վենծ քար՝ իրեք, չորս տոննայի չափ, մնում ա գոմի միջումը: Գոմն են գեղի գիդնականին Օքսուն կանչըմ են: Սա գալիս ա, նայում. «Բա ո՞նց անենք, ո՞նց չանենք, բերեք լաղմով ջարդենք»: Բերում են ֆի-

թիլը կառ գցում, շեջոմն ու տախտակը վրա տալի, իրանք փախչում են դրա սարը, կայնըն, նայում: Մին էլ տեսնըն են, որ լաղումը տրաքեց, կրիշը վե կալավ, պատերն էլ թամուզ քանդ ու քարափ արավ:

— Դա ճակատագիր ա, պտի ըլներ, — ասում ա Օքոսը:

Այս դեպքից հետո կուրթանցիներին գոյն տրաքցնողներ են անվանում:

4. Ուրագունը կուրթանցոց հավերի ճտերին վնասում ա, դուզդունին թակարդով բռնում են. ժողովուրդը հավաքվել ա, թե դուզդունին ինչ տուժ տանք, մինը երևի խելահաս ա ըլըն դրանց մեջ, ասըմ ա. «Բերեք խնոցու մրջին դնենք, տանենք քարիցը դվեր գցենք»: Էդպես էլ անում են, դուզդունին դընըն են խնոցու միջին, տանըն են քարիցը դվեր են զըցըն, փետից շինած բան ա, քարին դիաջում ա, ջարդվում ա, դուզդունը թռչում ա, գընըն: Գյուղացիք ասըմ են. — Չսատակեցիր, համա հո լեղիդ էլ ա պըտառե՞ց...

## ԿՈՒՐԹԱՆՑՈՅ ՌԵՍԵՐԵՆ ՍՈՎՈՐԵԼԸ

5. Համբոյանց գելընը ուզում են կարգին ռըսերեն սըվորեն, չունքի ասըմ են. «Ինչքան լիսու գիրես, ենքան մարթ ես»:

Գեղօցիք թոփ են ըլըն ու Համբոյին, որպես աչքաբաց մարթու, դարգում են քաղաք: Ես Համբոս գնըն ա թիլվիգ՝, մի մարթու ռաստ ա զալի ու հարցնըն. — Ախատերացու, ըստի ռըսերենը որդի՝ են ծախըն:

Դա շուն մարթ ա ըլըն, ծեռաց գլխի ա ընգնըն, որ միամտի հետ գործ ունի, խափըն ա, թե՝ ես ծախըն եմ: Դրան եղնեն ա գծըն, տանըն մի տուն: Ասըմ ա. — Ըստի ճսմփա պահի, չվել ես գամ:

Աըքիչ եղը գալիս ա, էրկու շահչկի կրոպկա հետը: Դու մի ասիլ դրանց մեջը ճանջ ա լքորած ուում: Կրոսկեքից մինը դնըն ա Համբոյի ընգամին: Համբո քեզ Համբո, ճանջի

բզգոցո լըսըն ա ու ուրիխանըն: «Զա՞ն, ոըսերեն ջան, գեղը թող լիսավորվի»: Շահչկի կրոպկեքը վե կալած գալիս ա զեղը: Գեղասցիք թոփ են ըլըն ու ըստիան, ընդիան վռազցնըն: «Արա Համբո, հյա բաց արա»:

Դա որ բաց չի անըն, ճանջերը դուս են զալի ու պուկ, փախչըն են: Հավարն ընգնըն ա գեղը, թե ռըսերեննին փախան:

Տենըն են մինը գնաց ու մտավ ձորի էրը: Դրա եղնա գնըն են: Համա էրը մտնիլը դժար ա ըլըն: Իս անեն, ինչ չանեն, վերջը մի խոսքի են զալի, որ տերտերը աղորթագիրը կարթալուկ, թոգով կապած դվեր մտնի էրը ու ռըսերենը հանի ընդիան:

Դու մի ասիլ էրի միջին մի արջ ա ըլըն: Տերտերը հենց մտնըն ա էրը թե չէ, եղ արջը գլուխը պոկըն ա: Որ տենում են տերտերը եղացավ, թոգը քաշըն են, ինչ տենան, տերտերի գլուխը կա ոչ, ըստի ըոմանըն են, սկսըն են իրար հարցնիլը, թե տերտերին որ թոգով ցծացնեին, գլուխը վրին էր, թե չէ՞: Ոչ մինն էլ ա հիշելուս չի ըլըն: Գնըն են տերտերի կընգանը հարցնըն.

— Այ տերտերակին, ըստի տերտերի գլուխը վրին ա էլե՞լ:

— Վայ Ֆոքի, — պատասխանում ա տերտերակինը, — ետ գիդեմ ոչ, համա միտս ա, որ գիրագի օրը ժամ ասելիս միրուքը վրին տըմրտըմբեր:

6. Կուրթանցիք մեջներին մի պառավ, գիդուն մազդ են ունենում: Մի անգամ էղ րիձեն ոտով գընըն ա թիլվիգ: Են ժամանակ ճանապարհներ չկային թիլվիգ — Զալալօրլի, գեղերը ոտով էին զընըն: Գընըն ա խոչավանքը, տենում ա պատարագ են անըն. զարմանում ա, թե պատարագն ինչ բան ա: Մի կինտոյի հարցնում ա, թե. — Ես ի՞նչ բան ա:

Կինտոն թե. — Բա չգիտե՞ս, պատարագ ա: Զեր կողմերը պատարագ չե՞ն ամուս: Հայ չե՞ս:

Կուրթանցին թե. — Հայ են, պատարագ չենք անում, շոու մարդիկ ենք: Անվորցրու՛, եղ ոնց են անում, մենք էլ անենք:

Եղ կինտոն սովորցնում ա, ասում ա. — Կերթաս ծեր գեղը մի քանի փեթակ ճանճ

\* Քոյեցիք թիլվիգին են քաղաք ասելիս լըլըն (Ծ.Ա.):

կիվաքես, ժողովորդին կիվաքես մի գոմի մեջ. բոլորին կտկլորացնես. ծակ ու ծուկը կկալես. մի փետ էլ վե կունես եղ փեթակներին թուն հա թըխկ ու բաց կանես, պատարագն ինքն իրան կըսկըսվի:

Բիծեն գալիս ա, գեղացիք հավաքվում են, թե թիլվիզ ո՞նց ա, ի՞նչ լավ նորություն կա: Սա թե. – Թիլվիզ լավ բան կա. մենք ինչ հայ ենք, պատարագ չունենք: Ինձ սովորցրել են, բերեք մենք էլ անենք պատարագ:

Գեղացիք, թե. – Դա, հա, հոգուդ մատադ, մենք էլ հայանանք:

Էն ա բերում են էղ փեթակները դնում են գոմը, ժողովորդին մարդ ու կնիկ, հավաքում, բոլորին տկլորացնում, ծակ ու ծուկ կալում ու դուռն էլ դայիմ փակըմ: Բիծեն փետը վեր ա ունում, էղ փեթակներին տուր թե կտաս: ճանճերը ոնց են գժվում, դուս են թափվում: Տկլոր ջան, գժված մեղու, ի՞նչ կըլի: Էնայս պատարագ են անում, որ դադում են ամենքին: Գոռում են, դես-դեն, դուռը կոտրում են, ամենքը մի կռնովը չգիտես ուր են փախչում: Մի մարդ էլ, որ տիե փախչում ա, մի ըրեխի ա ռաստ գալի: Ըրեխսեն հարցնում ա, թե մոըս տեհել չե՞ս:

Սա թե. – Մորդ հետևիցը պատարագ էր կպել, իի գմե՛ր, իի գմե՛ը, որ գյուլլա գցեի, հասնիլ չեր:

7. Կուրթանցի մի գյուղացի գընըմ ա Աստեփանավան, հասնըմ ա Աստեփանավանի շոշը. նստում ա, որ դիմացանա: Տենում ա իրեք տրայախըրդու անելով, դրա իրան են գալի: Գալիս են կայնըմ են էս գյուղացու աղաքը: Մեկը դրանցից ասըմ ա. – Դայթիկ, մի բան ասեմ, հո ներլանալ չես:

– Չէ, – ասում ա գյուղացին, – ասա:

– Դայթիկ, բեղերտ տու, տանեմ թատրոնի շենքումը ման ածեմ ու բերեմ տամ քեզ:

Գյուղացին ետ ա դառնում, թե. – Տղա ջան, կտամ, բան չեմ ասիլ, համա երեկ մեկել օըը մերդ ծվերս տարել ա, եղ չի բերել: Դմի որ բեղերս էլ տամ, տանես, ես ոնց մնամ անբեղ ու անծու:

8. Կուրթանի մի գյուղացի, որ Աստեփանավանումը եղ իրեք տղին խոսքակոյս ա անում. տղերը դրան ձեռների վոր վերցնում են ու գնում են դրա ճաշարանը: Գյուղացիք տղեքին ասում են՝ տղեք, վե դրեք: Տղեքը անգաճ չեն անում: ճանապարհին կնանիք թոփ ըլած են ըլում. էղ կնանոցից մինը կայնացնում ա տղերքին, ասում ա. – Վե դրեք էղ մարդին: Այ մարդ, ի՞նչ ա ըլել, որ քեզ դիակի դայդի տանըմ են:

Գյուղացին ասում ա. – Էն տղեն բան ասավ, ես էլ մի բան ասի, սիե տանըմ են, – ասում ա գյուղացին:

– Ի՞նչ ասիր, – հարցնում ա կինը:

– Թող տղեն ասի, որ ես էլ ասեմ, – ասում ա մարդը:

9. Կուրթանցի մի չորան թագա չարուխները հագին սարն ա գընում: Որ գնում, հասնում ա Սրբ Սարգսի ըիմացը, ասում ա. – Է՞յ, մեռնիմ ոտիդ տակին, Սրբ Սարգիս, էս տրխընին թագա տանում եմ, թագա էլ բերիմ:

Չորանը գընըմ ա սարումը էրկու ամիս ծլեքը ա ընգնում, թագա գործած տըրխընին թագա մնում ա, էղ թագա հագնում ա, գալի:

10. Կուրթանցի մի տղի բանակ են տանում: Փործնական պարապմունքների ժամանակ նորակոչիկների փործելու հմա մի րան են տրաքացնում, տենում են բոլորը փախել են, տափ են կացել, մենակ մի կուրթանցի ըտի կարնած ա մնացել: Ասում են. – Դրանց միջի սրտովը դու ես, քեզ դրկել դինք կոսմոս թոչես, կըգնա՞ս:

Ասում ա. – Գնալի կգնամ, համա դե առաջ մի շալվար բերեք, շալվարս փոխեմ:

11. Կուրթանցիք գութան վարելիս են ըլըմ, գոմշընին չոքում են, գութանը քաշում են, վեր հիե նիե գութանավեր գոմշավեր գնան ջուրը: Սրանք կարօմ չեն աղաքներուն կտրեն ու չիմ ջարդ ու փշուր են ըլըմ: Ասում են. – Ատա, գոմշընին ջիանդամը, ափսոս րոնչըի տովըչած սամենիս, թագա ին, սօրի են շինել:

12. Կուրթանցի մի քանի գեղացի գնում են քաղաք բան-ման առնելու: Քաղաքի խանութում կարմիր, սիրուն սանդալներ են տեսնում, առնում են, հաքնում: Ետ գալիս նստում են դինջանալու, նայում են իրանց ոտներուն ու շշկվում են:

— Այ տոյա, իս ոտները ո՞րն ա, — ասում ա մինը, նյուսը, մեկելը:

Եղ վախտը ճամբովը մի հոտաղ ա անց կենալիս ըլում, ծեն են տալի. — Այ տա, մող արի, — հոտաղը մոտենում ա, — մի մեր ոտեզը ջոկի:

Հոտաղը գլխի ա ընկնում, որ սրանք սարսադ են, ճիպուտը քաշում ա տուր թե կտաս սրանց ոտներուն: Սարսադ գեղացիք ջոկում են իրանց ոտնեզը, իլա մի բան էլ հոտաղին շնորհակալ են ըլում:

13. Կուրթանցի մի գյուղացու էրկու ոչիսարը գողանում են: Ով տարած կըլնի, որ տարած չի ըլնի, որոշում են գմալ Օքոսի մոտ խորհրդի: Գալիս են, թե. — Օքոս ապի, մեր ոչիսարները ո՞վ տարած կըլնի:

Սա էլ թե. — Ով որ դուռը րաց ա ազել, նա էլ տարել ա:

— Այ տա, գդավ, — ասում են գյուղացիք, — իմաստուն ա, էլի:

14. Մի թուրք բերում ա ղավեն պահ ա տալի կուրթանցուն: Դավեն գնում ա աղածելու, քարից թոլ ա ըլնում, ընգնում ծորը ու Զողագետում խեխտվում ա: Խաբար են անում թուրքին: Թուրքը էկել ա նստել, Օքոսին էլ բերում են նստացնում, որ թարգմանի եղածը: Ասում ա. «Այ յոլաշ, դավա գեղթի տաշն բաշնա, բիրաս գոլը-մոլ կըծելու դի, չորս ոտով փստլան դի, սյուղուշտի ոլղանոի, բու կաշի, բու բաշի: Խստիր սան ափար, խստիր սան րախչի»:

Գյուղացին թուրքին հասկացնելու և թաղմանության համար էրկու հատ ոչիսարի հախ ա տալի Օքոսին:

15. Համբոն հրսանքից հարփած դուս ա գալի ու բախչըմը մի ծառի քոթկի տակ խտոր

ա ընգնըմ քնըմ: Մին էլ էրազ ա տենըմ, մթամ ինքը հրսանքըմ պար ա գալի: Աչքերը բաց ա անըմ թե չե. նրան նիենց ա թվըմ. թե գուռնաղիու են ածըմ, ծառներն էլ պար էկանի են ըրեվըմ: Չենց գիղենըմ ա էտ քոթուկն էլ գուռնաչին ա, մի արասանոց ա հանըմ, թափով կացընըմ քոթկին ու գորըմ. — Զան շաբաշ, տղերք, մի հատ տուշ:

Ասըմ ա ու սկսըմ պար գալը:

16. Համբոն գնացեր էր կայարան: Դրա ձեռին ժամացույց ա ըլըմ: Մի կնիկ հարցնըմ ա, թե. — Ախսեր ջան, ժամի ջանի՞ն ա:

Դա մտիկ ա անըմ ու ասըմ. — ժամի էրկուսն ա:

Կնիկը հարցնըմ ա. — Ախսեր ջան, երկաթուղո՞վ ա:

— Չե, քիրա ջան, շոշով ա:

17. Նիկոլի վախտը ցարի ստրաժնիկնին թաքավորական խարօց իրվաքելու հըմա գընըմ են Կուրթան: Դրանց ծիանու կերը հատած ա ըլըմ: Ուգում են կեր առնեն, համա ոչ մինը ոուսերեն գիղենալիս չի ըլըմ, որ դրանց պատախանի: Ախն էլ հիշում են, ոզ Մքթաղանց Համբոն ոսերեն գիղի: Դրան դի են տալիս, կանչըմ են, թե ստրաժնիկներին պատախան տուը:

— Եսը, — որդակի պես գոռոգացած ասըմ ա Համբոն:

Ոըսնին դրան հարցնըմ են. — Սենո ե՞ստ:

Դա պատախանում ա. — Եստ, ոռւս ջան, եստ:

— Այվոզ ե՞ստ, — հարցնըմ են ոըսնին:

— Եստ, եստ, — նորից պատախանըմ ա Համբոն:

— Նու, իդի պրինիսի:

Ոըսների էս խոսքի վրա Համբոն հլեղ ասըմ ա՝ եստ: Ասըմ ա ու տեղիցը ժած չի գալի:

Դու մի ասիլ էս խեղճ Համբոս մենակ եստն ա գիղենալիս ըլըմ: Ոըսնին հենց գիղենըմ են իրանց ծեռ ա առնըմ, պլետնին քաշըմ են, ոլան սկսում են ծեծիլը:

Եղ վախտը մինն ասըմ ա թե. — Տղերք, Ներկարարանց Համբոն էլ լավ ոըսերեն գիղե,

կանչենք սրանց մի բան հսկացնի, հլքաթ սրանց ռուսերեննին իրար բռնըմ չեն:

Ներկարարանց Դամբոն գալիս ա ըտի ու ասըմ. – Նետ. Անտ. որսմի ջան:

Դա էլ մենակ նետն ա գիդենըմ:

Ուսնին մտածըմ են, որ մարթ ա էլի, հլքաթ հսկացել չի, բրախիւմ են: Ծածված, հասիլ եղած Դամբոն վեր ա կենըմ ու էն մեկել Դամբոյին ասըմ. – Դամբո ախպեր, քո նետը էլել չեր է, իմ եստին սպանիլ տին:

18. Դամբոյանց գեղըմը մր կընյազ ա ըլըմ, ընդար չար մարթ ա ոլըմ, որ գեղացիք դրանի ուռու պես դողալիս են ըլըմ, հեչ մընի հետ էլա խոսըմ չի ընդար հմբարթ ա ըլըմ:

Մըհետ Դամբոն ճամփովը անցկենալիս ա ըլըմ՝ սելին նստած, մընել բրավուրդ ա անըմ, որ իրես դըբա իրան ա գալի կընյազը՝ իրա ֆայտոնին նըստած: ճամփեն էլ նեդ ա ըլըմ: Ես կնյազը կայնըմ ա ու գոոըմ դրա վրա:

Եքսի օրը Դամբոն վեր ա ըլըմ կըտերը կայնըմ. – Ա ժողովուրդ, հըլա էկեք:

Ժողովուրդը թուփ ա ըլըմ. – Աղա, եդ ի՞նչ ա էել:

– Բա ասիլ չեք կընյազը ինձ հետ խոսաց:

Ժողովուրդը ըրմանըմ են. – Աղա, ի՞նչ ասավ:

– Ասավ՝ շան տղա, սելըդ դրադ քաշի:

19. Մի կուրթանցի գընըմ ա քաղաք, որ ըրեխանց հմար շոր-մոր առնու, ճամփին

ուզում պատառ մը դինջանա, չիբուխը վառի. Եղ ա դաւնում, որ քամին կրակը հանգընե ոչ. մըտիցըն ընգնըմ ա ետ շրջվի ու դիենց էլ աղաք ա անում:

Մին էլ իրանց գեղացոցն ա ըռաստ գալի, հարցընըմ ա. – Ճեր օխնածներ, ես իլա գընըմ եմ քաղաք, բա որու ք եդ ուր եք գընըմ:

20. Էրկու կուրթանցի իրար հետ վիճըմ են, թե են ըրվացողը բեգակն ա. թե լիսնա՞կը: Մի օքմի ա անց կենալիս ըլըմ. սրա աղաքը կտրում են. – Ճենց արեվըտ ապրե, ախպեր. դուն դուգն ասա, էն արևն ա, թե լիսնակը:

Սա թե. – Գիդեմ ոչ. ծեգ մատաղ. ես ըստենցի չեմ:

21. Կուրթան գյուղի նախագահն ու հաշվապահը գընըմ են Մոսկվա: Մոսկվայում նախագահը մի հատ ցիլինդրը ա առնըմ, ցիլինդրը գլխին մի քիչ մեծ ա ըլնըմ: Դաշվապահն ասըմ ա. – Վճառ չումի, նախագահ ջան, ծմեոր բրդի գուլպով կիավաքես:

22. Մի կուրթանցի ըռավողը քշերիանա ջղայնացած տանիցը գնալուս ա ըլըմ. հարևանն ասում ա. – Եղ ու՞ր ես գընըմ ըտհենց ջղայնացած:

– Գընըմ եմ ընգնեմ քարիցը. իսոգըս իրա տասներկու բալին անդեր թողուց, քարիցն ընգավ, ափսոսաց ոչ, ես իմ էրկու բալին իսի չտեմ անդեր թողա:

## ԶՈՉ

## 138. ԼԵԶՄՆԻ ՍՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մի չխոսկան հարս ա ըլում: Գալիս ա պատրոնին ասըմ ա. – Գոմեշը ծնել ա:

Պատրոնը ասըմ ա. – է՞զ ա, թե՞ որձ:

Հարսը մատը տանըմ ա պատրոնի առաջը, ասըմ ա ործ ա:

Պատրոնը հարցնում ա. – Ի՞նչ թափուր ա:

Պատրոնը մածուն ուտելիս ա ըլում. մատով վեր ա ունում, մինը ճակտին ա քըսըմ, մինը՝ պոչին: Մսում ա՝ պոչն էլ ա սիվտակ, ճակատն էլ:

2. Մի տղա ու աղջիկ սիրահարված են ըլում, աղջկա հերը տալիս ա ուրիշ տղի:

Սիրածը իմանում ա աղջկա գնացած գյուղը, լավ փող ա աշխատում, իրա նման մի անբեղ-անմորուս ընգերոց հետ կնգա շորեր են հագնում, գնում են աղջկա գնացած գյուղը: Գնըն են, հասնում են հարսի պատրոնանց դուրը, կեսուրին ասում են. – Ղոնախ չե՞ք ուգում:

Կեսուրն ասում ա. – Ղոնախն աստծունն ա, համեցեք: Հարցնելն ամոթ չըլի ո՞վ էք:

Սրանք թե՝ մինս հարսիդ հոքիրն ենք, մինս՝ հարսիդ մոքիրը: Հաց են ուտում, տեղ են շինում, որ պառկեն, հարսն ասում ա. – Չէ, մերա ջան, թոդ մոքիրս իմ կշտին քնի, հոքիրիս տեղը ջոկ գցի:

Գշերվա մի վախտ պառավը վեր ա կենում, որ գնա օդեն, կորկոտ էփի, ինամիներին հաց տա: Գնում ա կորկոտն էփի ու եղ ա գալի, տեսնում ա յոզդանը վրներից ընգել ա ու հարսի մոքիրի պոստի տակից սիե մի ցից էլած բան կա: Գնում ա եղ կորկոտն էփում ա, ասում ա.

– Խոլթը, խոլթը, կորկոտ ջան,  
Բըլդը, բըլդը, կորկոտ ջան,  
Շե ասեմ նուն ա  
Հոգուս մնուն ա, թե չէ, ես ի՞նչ բան ա:

Ծռավողը ինամիք կերան, խմեցին, գնացին: Կեսուրն ասում ա. – Այ հարս ջան, են ինչ էր քու մորքուրի պորտի տակինը:

Հարսը թե. – ի, մերա ջան, էվել բան ա

դուս էկե, ասում են որ ապիլացի անեն, կմեռնի. ենա հնե մնում ա:

Կեսուրը թե. – Վայ դատն իմ գլխին. հողն իմ գլխին, խեղճ կնիկ...

3. Մի աղքատ մարդ ու կնիկ են ըլում, ունենում են մի մեշոկ բուրդ: Կնիկը շատ թամբալ ա ըլում, թամբալությունից մի օր հիվանդանում ա:

Մարդն ասում ա. – Այ կնիկ, ի՞նչ ես ուգում: Կնիկը թե. – Խնջմնացոց:

Մարդը բերում ա մի մեշոկ րուրդը վառում ա:

Կնիկը ասում ա. – Օիսայ, քիչ ջանս հետ եկավ: Ղե լավ, են մինն էլ վառի, կլավանամ, լավ կլեմ:

Էն մինն էլ վառում ա, ասըմ ա. – Օիսայ, վայ, արդեն պոծա, լավացա:

Կնիկը լավանում ա, վե կենում. մազդը րուրդը վառելու հերսից ենքան ծեծում ա, թագարան հիվանդանում ա:

4. Մեր շրջանումը մի հաջու մեկելի մազդուն իյլում ա, իյան մարդ անըմ: Սրանց տեքոր տղի հրսանիքն ա, էրկուսն էլ գալիս են հրսանիք: Հըսանքավորներից մեկը մոտենում ա եղ մազդ իյլոդ կնգանը, ասում ա. – Մ քիրա, անունդ ի՞նչ ա.

Սա թե. – Կաքավ:

– Որ մի երգ ասեմ, իո չես նեղանա:

Թե. – Չէ:

Ու ասում ա.

Կաքավը կայնել ա քարին,  
Կտուցը լիքը արին,  
Խլել ա ուրիշի յարին,  
Խնքը մնա չոր քարին:

5. Մի տղա նշանվում ա. Նշանելու իրիգունը, որ նշանվորնին գնում են իյանց տները, մնում են նշանած տղեն, իրան զանքաջը: Զանքաջն ասում ա. – Բեգլար ջան, իլա մի քից զրից արա:

Սա թե. – է՞, այ մերա, ինչ գիղեմ, որ ինչ զրից անեմ:

— Բա ինչ բան չգիտե՞ս, — ասում ա զանքաջը:

— Մի բան գիտեմ, կայնի ասեմ. — ասում ա թեզլարը:

— Ասա, քի մատաղ, — ասում ա զանքաջը:  
— Գետը վրարև ա, Դազախեցոնց շունը մի մաշկո ա խեխտել: Եղ դադարը գիտիմ:

6. Մի տերլ հրսանիք ա ըլում, մի արջկա սիրած գուրնաչի ա ըլում: Աղջիկը գնում ա պարի մեջը մտնում:

Տղեն ասում ա. —

Կաաինկա, Կաաինկա,

Ես քո մետր նապին մեռնեմ, Կաաինկա:

Աղջիկն էլ պաթիցը լեզու ա ըլում, խո-  
սում, ասում ա. —

Յոթ ծականի կուռնիդ մեռնեմ, Սաթենոս,  
Յոթ ծականի կուռնիդ մեռնեմ, Սաթենոս,  
Թափա կարած չուխիդ մեռնեմ, Սաթենոս,  
Յոթ ծականի կուռնիդ մեռնեմ, Սաթենոս,  
Թափա կարած չուխիդ մեռնեմ, Սաթենոս:

Եր Լոբոնց տուն:

Մկարանց Վարդանը գլխի եր ըլըմ, ասըմ  
եր. — Մի քիչ եղացել եք, հատավ:

Կամ՝ Լոբին հարցնում եր. — Ո՞վ ա դարգել:

Ասըմ ա. — Սաքունց Վասիլը:

Ասըմ ա. — Գնա, ասա քաշ ու կշեռք չունեմ.  
պոգը (Սաքունց Վասի էվելի անումը ալոգ ա)  
դարգի՝ պոգով չափենք, տանք:

2. Օծունցի մի մարդու կովը գողացած են  
ըլում, բայց թե ով ա գողացել, չի իմանում: Կո-  
վատերը պրիստավին բոդոքում ա, իրեքի վրա  
կարծիք ա անում: Պրիստավը իրեքին կանչում  
ա, թե՝ ես մարդի կովը գողացել եք: Նրանք էլ  
ատկազ են ըլում. մենք եղ բանի տերը «ենք,  
խաբար չենք: Վկա չսա. որ հաստատի: Պրիս-  
տավն ասում ա՝ դե գնացեք: Արանք դուս են  
գալի, որ գնան, եղնուց ձեն ա տալի, թե.  
«Գողի մինը, դուն ո՞ւբ ես գնում»: Դրանց մեկը  
ոդ ա նայում, որ եղ ա նայում, ասում ա՝ դե  
պատմի, ասա: Սա թե՝ Ալա ջան, ո՞րն ասեմ:

Մարդը շշկլըմ ա, ենդար գողութին ա արել,  
իմանում չի, ոքը պատմի:

3. Մեկը եզները լծում ա, գընում ա անտա-  
ռից փեղ բերի: Մի քարափի գլխին մի ծառ ա,  
ծառը որ կտրի՝ ծուը կընգնի, եզնիքը լծում ա  
ու ջնջնով ծառիցը կապըմ ա, որ կտրի, վեր  
ընգնելու ժամանակ եզնիքը քաշեն ես քարա-  
փի գլխի վրա վե գտեն: Դե մեծ ծառ ա ըլըմ, նա  
կտրըմ ա թե չե, եղ ծառի ուժը շատ ա ըլըմ, եգ-  
նիքն էլ հետո քաշըմ ա, դվեր ա աժըմ ձորը:  
Դա աչքերը դառնըմ ա ու կուչ գալի, ասըմ ա.  
«Այ մարդ, էրագում ըլեմ, ես բանը իրական չը-  
լի, էրագում ըլեմ»: Բայց որ տենըմ ա, որ եղ ա  
ծառը եզները ձորը տարան, ասըմ ա. «Եզնիքն  
էլ ջանդամը, լուծն էլ, ջնջիլն էլ, բայց սամենիս  
ափսուս»:

## 139. ՕՉՈՒՆՑԻՆԵՐ

1. Դրադից մարդ Օծուն գեր քոք խոգ առ-  
նելու, դարզում ին Զրգարանց Մարդիրոսի  
տուն, սրա էվելի անընդ խոզ եր, ուներ շատ  
խոշոր ու չաղ կնիկ ու նման մի աղջիկ: Դարիք  
մարդը հարցընըմ եր. — Քերի ջան, ասըմ են եր-  
կու մերին ունես, էկել եմ առնելու:

Սա էլ գիդար, որ շուլուխ ա, տանըմ եր  
շանց եր տալի կնգանն ու աղջկանը, թե՝ ին  
խոզերն ես են, թե ծեռնըտու ա, տար: Մարդը  
փոռ ու փոշման եղ եր գընըմ:

Մինը թադիք առնոդ եր զալի, ասըմ ին՝  
Ալեքսանանց Ավետիքը լավ թախքներ ունի  
(սրա էվելի անումն էլ թադիք ա), դարգում ին  
մորդը:

Մինը դագ եր ուգում առնի, դարգում ին  
Զանանց Ավետիքի տուն, սա գլխի եր ըլըմ,  
ասում եր. — Մի քիչ շուտ իք էկել, ծախսցինք:

Մինը խանութ լորի առնելու եր գընըմ, ըստի  
ասում ին՝ Մակարանց Վարդանն ունի, գընըմ

## 140. ՀՈԲՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

1. Ես զեղումը՝ մի հարսը գնում ա ալիր  
վոր ունի: Զվալը լիքը ալուրի սնի քմակին

<sup>1</sup> Ծնողում (Ծ.Կ.):

դրած ա ըլում: Հոբոսը հափուռը սնի էրկու կողքովը տանում ա, ալիրը հափում. որ բերիլ տի, մթամ թե օգտագործեն: Հըմի ալիրը հափուել ա, թե ուզում ա բերը, վեր ա ուանում, գիդում չի, թե ինչ անի, եղ հարսին ըտե թողնում են, գալիս են Հոբոսին տանում:

— Հոբոս, արի հլա մի իսելք շանց տու, ինչ անենք, որ ես հարսի ծեռները սիենց բան էլած ա:

Հոբոսը մտիկ ա անըմ, մտիկ, ասում ա. — Թե սինը կտրե՞ք, տունը չորս սընի վրա շինած վենձ տուն ա, տունը փուլ կգա, մենք տակին ենք. րերեք հարսի ծեռը կըտրենք:

Եղ ասում ա թե չէ, եղ հարսը ալիըը եղ ջվալումը վեր ա ածում, ծեռները քաշում, նոր տենում են, որ եղ հնարը կա, ել ինչի ենք Հոբոսին բերել:

2. Մի մարթ ես մեղ գեղիցը մի սապոգի թայ, ա գդած ըլում, սապոգն ել ով ա տեհած ըլում, թե սապոգն ինչ ա, ով ա գիդում որ թվի ուան ա ըլում: Գիդեն ոչ ես ինչ բան ա, գնում են Հոբոսին ասում, որ. — Արի, մենք մի բան ենք գդել, տես ես ինչ ա:

Գալիս ա, գես պտող անըմ, դեն պտող անըմ, մտիկ ա անըմ, ասըմ ա. — Սա դագմի բուն ա, դա ուրիշ մի զադ ել ա չի:

3. Եզզ ոնց ա ըլել, կըրասումը գարի ա էլել, իզուր ա էլել, գլուխը կոխել ա եղ կըրասի մեջը, չարիշ են էկել, չարիշ են էկել, կարացել չեն եղ պոզերը հանեն, էկել են Հոբոսին տարել, թե. «Արի մի իսելք շանց տու, ինչ անենք»: Գնացել ա, մտիկ արել, տեհել ա կարում չեն հանեն, ասել ա. «Եզան շլինքը կըտրեցեք»:

Եզան շլինքը կըտրել են, գլուխը մնացել ա կըրասումը, եզզ ել եղ ա սատկել ա: «Հոբոս, թա իըմի ի՞նչ անենք, ել չենք կարում գլուխը հանենք, գլուխը միջին ֆոտելու չի». Թե. «Դմել կարասը կըտրեցեք»:

4. Մի նալն են գըղնում, նալը տեհած չեն հըլբաթ, տանըմ են Հոբոսի կուշտը. — Հոբոս, թա սա ի՞նչ կըլի, ես ի՞նչ չի ըլի:

Սիե պտող ա անում, պտող ա անում, ասըմ ա. — Ես մեկը մաշվել ա, վեր ա ընգել, — ասըմ ա. — Ես լիսնեկի կեսն ա, ես ել՝ մի կեսը, մնացել ա ընդի:

5. Հոբոսը իրեք աղջիկ ա ունենում, եղ աղջկերանց իըմա իսնամախոս են գալի, հերն ասում ա. «Դուք մինըդ ել ա խոսեք ոչ». իրեքն թլիկ են ըլում: Խնամախոսը նստոտած ա ըլում, մի անդեր մուկը գալիս ա դենը անց կենում, մինն ասում ա՝ մուտը, մուտը. Են մինն ասում ա՝ մտավ ծատը, են մինը տեհած չի ըլում, ասում ա՝ ոնչ տեհել եմ, ոնչ ել տոսել:

6. Մի հետ, ուժեղ կազկուտի վահիտը գեղըցիք իըվաքվըմ են, թե մեր առտերն ինչ ըլում են, թող ըլին, գընանք գոնե տանուտերի առտը փրկենք: Ըժում ամեն մինը տանիցը վիր ա ունում. որը մի փալաս, որը մի թաղիք, որը մի լրիեր, որը իրա եփընջին, վազ են տալի դըբա տանուտերի առտը, փրուում են վրեն: Ցորնի հասկերը գեղացոց ոտների տակին ջառթվում են, ոտնատակվում ու գեղնի հետ դրգվում:

7. Մեր գեղացի Հոբոսը իմաստուն մարթի անում ա ունենում:

Մի հետ ըկոավնին վրա են տալի գեղի արտերին ու չիմ փըչացնում: Գեղացիք միտք են անում, միտք, գլխի չեն ընգնում, թե եղ գուլումիցը ո՞նց պըըծնուն: Վերջը, թե՝ ես բանիցը Հոբոսը գլուխ կիհանի: Վեր են կենում գալիս Հոբոսի կուշտը:

— Արա, ի՞նչ ա էլել:  
— Եղ անդեր ըկոավնին արտերը թամուզ դում-դուզ են անում:  
— Արա, եղ անդերնին ո՞ր կըոնուցն են գալի:  
— Գաղա տափի կըոնուցը, Հորոս ջան:  
— Վա՞յ ծեր տունը չըքանդվի, գլխի չե՞ք ընգել: Եղ կոխկի կարմունքը քանդեցեք, ելի...

#### 141. ՀԱԼԱԾ ՅՈՒՂԲ ԿՄՐՄԳ ՃԻՆԵՑ

Շահալի գյուղում մի տարի անասունների կաթնատվությունը ընկնում ա, ու գյուղացիք

չեն կարըմ յուղի հախը տան: Ի՞նչ անեն. ինչ չանեն. հավաքում են գեղացիք, որոշը են գեղի վեսձերը գնան տանայիրոջ ոտը. խնդրեն, ըղաչանք անեն, որ յուղի հախը պակասացնի. յուղ չունեն, կարալ չեն տալ: Տանտերը լըսըմ ա, միտք ա անըմ, միտք ու թե. – Որ կարալ չեք հալած յուղ տա, կարագ տվեք:

Գեղացիք սուս ու փուս եղ են գալի: Հասնըմ են գյուղ, տենըմ են անհամբեր գեղացիք հավաքվել են գյուղամիջումը:

– Յը, ի՞նչ ասավ:  
– Ասավ հայած յուղ կարալ չեք, կարագ տվեք:

Եսպիսով օգտվելով գյուղացիների միամտությունից, տանուտերը յուղի դիմաց կարագ պահանջելով հարկը ավելի է բարձրացնում:

## 142. ԱՍԼԱՄԱՋԱՆՑ ՇՈՒՆՆ ԵՄ ՀԱՌԵ

Դարբասեցի Ասլամագանք մի շուն են ունեցել: Հենց որ Ղշլաղում զուռնի ծեն ա լսել, վազել ա հարսանիքի ոսկոռ կրծելու: Մինչև կարմունջն ա հասել, գուռնի ծենը Դարբասում ա ըսկսկել, Ղշլաղում կտրվել ա: Շունը հետ ա վազել և էսպես վազվելով մնացել ա սոված:

## 143. ԸՐԻՑՄԱՆՑ ՄԱՔՈ ՀԱՌԱ

Ըրիցանց Աաքոն հնձելիս հանգստանում չեք, էնդար էր հնձում, որ վեր էր ընկնում ծորի միջումը: Վեր էր կենում էլեղ հնձում:

144. Վահագնեցի դարբին Կահանց Աաքոն ամառվա մի օր Ըրիցանց Աաքոյի ծիու կամն ուզում ա: Աս թե. – Տար, համա ըռավողը վաղ բերես, գիղաս կալը հանած ա, օրակալ եմ անըմ:

Մի շաբաթ ա ընց կենում, համա դաըրինը կամը բերը չի: Մի շոգ օր, ճաշադեմ, Ըրիցանց Աաքոն շապիկը հանըմ ա ու գընըմ ա դբա դարբնի կալը: Առանց ծպտուն հանելու կանգնացնում ա ծին, կամն անջատում և սուր

քարերի կողմը ոնում տկլոր մեջքին ու գյուղամիջուկ գալի: Հարցին պատասխանում ա. – Անում են, որ ջանիս զավ տա. մեկ էլ որ գան ուգեն, չտամ:

145. Վասիագնեցի Կողոմ Մարտիրոսը՝ Կողոշանց Մարտիրոսը գնում ա Ծրիցանց Աաքոյի տուն, տաս մանեթ փող ա ուզում: Սաքոն փողը տալիս ա, հետն էլ թմբահ անում. թե՝ թեզ եղ կրերես: Կողոմը դուս ա գընըմ, նես ա գալի, փողը եղ ա տալի, ասըմ՝ սրանի թեզը չկա:

146. Վահագնեցի Վարդմանց Ամիրխանը վաշխով փող ա տալի և ստացողների ազգանունները գրում դավթարում: Պարտատերերից մինը ժամկետը լրանալուց հետո գալիս ա Ամիրխանի մոտ, հարցնում իր պարտքի չափի մասին: Ամիրխանը նայում ա ու ասում. – Քսան մանեթ պարտք ես վե կալել, եսքան էլ շահն ա:

Պարտքատերը ասում ա, թե՝ տաս մանեթ ա վե կալել, ոչ թե քսան:

Ամիրխանը պատասխանում ա. – Բադավթարը սուտ կասի՞:

Դրանից ժողովիդի մեջ մնացել ա. «Ամիրխան բիձու դավթարը սուտ չի ասիլ» դարձվածքը:

147. Էրկու հնգեր իրար հետ քյնալիս տենըմ են իրեն մի պան կյետը տանըմ ա: Հնգերներից մինը մոտանում ա թե չէ. տենըմ ա արօ ա, բրախըմ ա, վըեր ես կյա, համա արջը տրան փրոնըմ ա, սա էլ կարըմ չի ագատվի:

Մէկէլ հնգերն էլ գյիդում ա թե կարըմ չի պիզի, ասըմ ա. – Արա բրախի, բրախի, նոթալը բրախի:

Հնգերը թե. – Ես բրախըմ եմ, համա մոթալը ինձ բրախըմ չի:

148. Առվի տաբի ա ըլում, մի քանի մարդ Զալալօլուցը իըվաքվըմ են, գնում Թիլվիզից ցորեն առնըմ, բեզըմ: Խամփին թուրքերը կուակ են տալի, շատերին սպանում, ցորենը խլըմ: Գեղացու մեկը սաղ ա մնում, մի հանգով փախչում ա, զալի տուն, կնկանը պատմըմ ա, ասըմ

ա. – Ա կնիկ, Ծմփին թուրքերը վրա տվին, քանի քանըսին սպանեցին, ցորենին և առան, տարան:

Կնիկը թե. – Ա տղա, քեզ էլ սպանեցի՞ն:

149. Նիկոլի վախտովը Չաղիձորը գեղացոնց մեկի խոզը կորըն ա: Ծամոււոցի մեկը գոդանում ա էդ խոզը, բերըն իրա տուն: Ստրաժնիկնին գողի իզը բռնած գալիս են գյուղ, տնետում ընկած խուզարկություն անըն: Խոզը գողացողը խոզը դընըն ա էրեխի օրորոցընը, շորով ծածկըն, կնգանն էլ չոքացնում կշտին, մթամ ծիծ ա տալի: Ստրաժնիկները մտնում են օթախը, որ խուզարկեն, մարդը դիմում ա դրանց. – Աղա, թե ես էս գործին ազյահ ըլեմ, ես օրորոցի էրեխի միսն ուտեմ:

Ստրաժնիկնին թողնում են, հեռանում:

150. Յամգաչիմանցի մի եգատեր ուզում ա եզը ծախի: Գեղացիք թուփ են ըլում, գինը որոշում, հետո կենտ-կենտ ուզում են, որ մի քիչ գինը պակասացնի: Գյուղացին ոչ մեկի խաթրը չի կոտրում, բոլորին էլ բաշխում ա:

– Այ տա, էդ դադա բաշխեցիր, րա քեզ ի՞նչ մնաց, – հարց ա տալի մուշտարիներից մինը:

– Ինձ էլ իմ եզը մնաց, – ասում ա ու եզանը քշում ա դրա իրա տունը:

151. Անուշը պարի մեջ պարում ա: Առտենում են ու գգուշությամբ ասում. – Անուշ, իսպիրը՝ մեռել ա:

Չղադարեցնելով պարել, նա պատասխանում ա. – Իսպիրը մեռել ա, Անուշը պար չպտի կյա՞լ:

152. Անուշը մի վեդրո կաթ ա բերում սարիցը թե. – Իսպիր, վե կաց, կաթ եմ բերել, կուզես՝ կուզես, ուզիլ չես՝ գլխիդ կածեմ, – ու լցնում ա գերեգմանի վրա:

153. Լոռեցի պապը արթնացնում ա թոռանը, որ գնա դպրոց:

– Ահիչի, վե կաց, շկոլ գնա:

– Պապի, ես ճաշից եղմ եմ, է...

– ճաշից եղը ո՞րն ա. Թեզ գնա, որ թեզ եռ գաս, հավ կա, ծիվ կա, դաս սովորիլ կա:

154. Լոռեցը մի իջլովոր մեռնում ա: Բարեգամնին իջվաքվում ին, լաց ու կոծ անըն:

Հըրեվանի որբեայրի կնիկը դիմում ա մեռելին. թե. «Յամբո ջան, մեռ մարթին կասես, որ դարդ չանե, ըրեխեքը սադ-սըլամաթ, վենձացել են, մենք էլ լավ ենք, մենակ իր պակասությունն ենք ջաշըն»:

Մեռածի կնիկը թընգթնգացնելով վրա յա բերում. – Մեր Յամբոն մտքամոլոր ա, մատին թել կապե, որ մտքիցը ընկնի ոչ:

Հըրեվանի կնիկը իրա շորիցը թեւ ա գտնում, կապում մեռածի մատիցը:

155. Լոռեցի մի մարդ իիվանդանում ա. կանչում ա կնօքը թե. – Այ կնիկ, մահս մոտ ա, կանչի որդիկերանցս, թող գան լսեն իմ վերջին պատգամները:

Որդիները գալիս են: Յայրը դիմում ա ավագ ողդում. – Բալա ջան, ես մեռնում եմ, էս տարի խարջըդ շատ ա, գործիդ վերահասու կաց, նոր տուն չշինես:

– Չէ, – մեջ ա ընկնում կինը, – ինչ ուզում ա լինի, տունն ես տարի պետք ա շինի:

– Դու էլ, – դառնում ա գյուղացին միջնակ որդուն, – ուսումդ կավարտես, հետո կամուսնանաս:

– Չէ, – թրի նման կտրում ա կինը, – էս տարի ծննանը կամուսնացնենք:

– Շան աղջիկ, – տնքալով ասում ա հիվանդը, – թե մեռնողը դու ես, արի իմ տեղը մտի, ես վեր կենամ, լու խոսի, ես լսեմ:

156. Լոռեցի մի գյուղացի պատահում ա հարեւան գյուղից իր ծանոթ գյուղացուն:

– Այ տա, էտ ո՞ւր ես գնում:

– Գնում եմ Շորագյալ:

– Ինչի՞:

– Գնում եմ իմ իմանամ գարու գինն ինչ արժի, որ գամ մեշոկներն ու փողը վեր ունիմ տանիմ, գարին առնեմ:

\* Իսպիրը Անուշի եղբայրն է (Ծ.Ա.):

– Այ տնաշեն, էնա ես մեշոկն ու փողն էլ տանեիր էլի՞:

– Տո սարսադ, ես հո՞ շաշ չեմ, որ մեշոքն ու փողը բեռն անեմ, տանեմ, բալքի գարի չկա:

157. Լոռեցի գյուղացին հանդից տուն ա գալիս, տեսնում ա հորթը բաց ա ընկել, կապում ա, մտնում տուն: Մի քը հետո դուրս ա գալիս, տեսնում ա էլի ա բաց ընկել, բոնում ա նորից կապում: Առավոտվս ծեզին վեր ա կենում, որ հանդը գնա, տեսնում ա հորթը չկա: Քաշում ա կնկանը դրի տակ, տուր թե կտաս:

– Այ տա, հորթը են ո՞նց էլի կապել, որ քեզանից եղը երկու անգամ էլ ես եմ կապել ու հմի եղա էլել:

158. Շնորհին արադ ա քաշում, հարևանն հոտն առնըմ ա, միանա գալիս ա թե. – Հարևան, եկել եմ ձեր բիզը տանեմ, շտապ հարկավոր ա:

– Տար, համա արի մի-մի բաժակ աբաղ խմենք, նոր տար:

Մինը երկուս ա դառնըմ, էրկուսը իրեք, մարդը հարբում ա, մոռանում ա մոգոնած սուտը, վեր ա կենում, որ գնա:

Հարևանը բերում ա, որ տա բիզը. – Կաց, սայ տա, բա բիզը չե՞ս տանում:

– Բիզն ընչի՞ս ա պետք, ես հո փալանդուց չեմ:

159. Դեբեղ մի անբան մարթ ա ըլըմ, համա ունենըմ ա մի լուծ լավ եզնիք: Ամեն սրա կես քշերին սա մերին ա գընըմ, որ լիսապետին տեղ հասնի, փետը դբսսի ու րիզվա հովրն տուն գա:

Մի սրա էլ գնալիս ա ըլըմ, մի քանի թսյքաշ տղեք խոսքները մին են անըմ, որ դբա գլիին օյին իյաղան: Գեղիցը ըհագին հեռու, ճամփի դրադին տապ են անըմ, եփ սա քշերվա կրսին սելով անց ա կենըմ, թաքուն եղի կոնիցը դուս են գալի, տենըմ են քնած ա, սուս ու փուս եզնանցը հոք են անըմ դրա գեղը ու իրանք ծլկվոմ:

Եզնիքը մքիչ գնըմ են ու կանգնըմ: Մի քուն քնելուց եղը տերը վեր ա կենըմ, տենըմ ա սելը

կանգնած ա. քնակուու ճիպուտով եզնանցը տալիս ա ու թագաղան խռմփացնում: Մին էլ են բաշտին զարթնըմ ա, իրա հվատովը, մթամ թե մերին ա հասել, համա տենըմ ա, որ իրանց դուանն ա. խեղճ եզնիքն էլ լուծը ուսներին նստոտել են ու արխտին իրանց հմա արոծ են անըմ: Ըրմանըմ ա: Ասըմ են, նըհենց էլ իմացավ ոչ. դրուստ քշերվա կրսին ինքը դունիցը գնացել ա\*, թե եզնիքը լծել ա ու ինքն էլ սելի վրա քնել:

160. Մի քյասիբ կմրկ ա ըլըմ: Դրա կրակը վառելիս չի ըլըմ: Էրկու կտոր փետ ա դնըմ ծեղ-ծերի, ախչիկը փչըմ ա, փչըմ, կառ չի ընգնըմ:

Մերն ախչկանն ասըմ ա. – Ախչիկ ջան, գնա տերտերին կանչի, մեր կրակը օխնի, բելքի կառ ընգնի:

Մղջիկը գնըմ ա կանչըմ: Տերտերը գալիս ա տուն, տենըմ ա էրկու կտոր փետ են դրել ծեր-ծերի, ախչիկը փչըմ ա, կառ չի ընգնըմ: Ասըմ ա. – Օրշնած, էրկու կտոր փետ ես գձել կմըլմըլա,

Թե մի իրեք-չորս կտոր գձես, կգրգուա, Տերտերի հախն էլ կտաք, որ գնա:

Մի քանի կտոր փետ են գձըմ, տենըմ են կառ ա ընգնըմ, կրակն ըսկսըմ ա գրգուալը:

Ապրիս, տեր հայր, օրշնեցիր, կրակը կառ ընգավ:

161. Վարդաբլուրցիք բենգինի դատարկ րոչկեն ուգում են մաքըեն, մեջը ծեթ լցնեն: Էրկու հոգի նստում են բոչկը՝ մեկը մի ծերին, մեկելը՝ մլուս ծերին, թուղը են վառում, գցում ծակոց ներս, որ բենգինը վառվը ու հոտը դուս գա: Գազը բարձրանում ա, բոչկեն պայթացնում, էրկուսին էլ հանում վեր, կտոր-կտոր անըմ:

Այդ դեպքից հետո վարդաբլուրցիներին բոչկա տրաքացնողներ են ասում:

162. Համամլվը թունելը փորելու ժամանակ ֆիթելը հատած ա ըլում: Լոռեցի րանվորները մասքըրի փեսաի մեջը ծակրւմ են, որ ֆիթիլի տեղ բանացնեն, բարութը լցնում են

մասրիքի մեջը, մեկին էլ կապում են թուզով, որ մասրիքի պոչը վառի: Վառելուն պես բարութը պայթում ա, իրան էլ շարտում փողոցը: Մարդը սկսում ա վառվիլը: Ինքն իրան բղավում ա. – Վառվի, վաճքո, վառվի:

Երես-մերեսը վառվում ա:

163. Լոռեցի իրեք ախատ աշխատում են կայարանում: Մեկը լապատկեն չանի տակն ա ղնում ու կանդում ա: Մյուսը հարցնում ա. – Այա, իսի ես կանգնել:

Առաջինը պատասխանում ա. – Կայնելը պանելուց լավ ա:

Երկրորդը յսելով այդ նստում ա ու ասում. – Նստիլը կայնելուց լավ ա:

Երրորդն էլ պառկում ա ու ասում. – Պառկելը բրադուցը լավ ա:

Եղ օրը իրեքն էլ չեն աշխատում:

164. Յազար իննըհացյուր տասնըմեկ թվին չիգամալցի երկու ախատ ծիու բեռով ծու են տանում Թիլվիգ ծախելու: Ծախում են, թութուն են առնում, բերում: Թութունն էլ կանգրարանդ էր: Գալիս են, հասնըմ են Դվալա գլուխը, սովում են, սպիշկա չունեն, որ իրանց հմա մի րան էփեն, ուտեն: Տեսնում են մի սարի գլխին կրակ են արել. մի ախատ բեր մեկելին ասըմ ա. – Գնա կրակ րեր, ես ջախմախ հավաքեմ, որ ճաշ էփենք:

Ես մի ախատ գնում ա կրակ րերելու, տեսնում ա աքսիզը նստած կրակի կողքին: Կրակ ա վերցնում, աքսիզը կասկածում ա, հետը գալիս ա: Են ախատ բեր ուզում ա իմաց տա, ճվում ա. – Ախատ, ախատ, մի կրակի տեղ երկու կրակ եմ րերում:

Ախատ զիսի ա ընկնում, թութունը հանըմ ա, տանըմ, պահում ծառերի տակին: Աքսիզը գալի ստուգում ա, եղ ա դառնըմ, գընըմ:

165. Գութանը գնում ա հողը. պապը հողը վարելիս ա ըլում, կնգանն ասում ա. – Ակ կնիկ, խաչիլ կեփես, մի մեծ քիրա եղ կլցնես, կրերես հոտաղներս ուտեն:

Պապը գնում ա գութանը վարում, տենում ա ըոավոդվա հացը տատը դրգեց, ի՞նչ դրգեց.

թանով սպաս, մի քիչ էլ կարաք գարի չափի մեջ. Պապը տալիս ա եղ դրկածը գութանի ճակտովը կոտրում ա, ծին նստում ա, գալի գեղը: Գալիս ա տատին ծեծում ա, ջահրեն ջարդում, կրակը վոա ա տալիս, իւսչիլը էփում, եղը վիեն լցնում, տանում գութանավորին ուտեցնում: Էկսի օրը բերում ա հողի դրադին մատաղը մորթում ա, որ հողերը վարել ա, պրծել:

166. Մեր գեղումը մի հանդ կա. գեղի մենձ մարդիկը գընըմ են, որ հանդը բաժանեն կուրթանի ու Վարդաբլուրի միջև: Վարդաբլուրցի մի մարդ հանդի մեջ մի ծիծու ա տենում, ասում ա. – Այ տա, կուրթանցիք սեկրետնի գեմլամեր են բերել:

167. Լոռեցին քաղաք դոնախ ա գընում: ճաշի վախտը, ոսկոռները կրծելուց եղը, շպրտում ա լուսամուտից դուրս, կպչում ա շուշեն ջարդում: Լոռեցին գարմանում ա. – Ճրե՞ս – իրե՞ս, լիսը սառցրել են:

168. Մի մարցեցի մարթ շատ դժար հիվանդ ա ըլում: Ասում են՝ ի՞նչ ա սիրտը ուզում: Ասում ա՝ տանձ եմ ուզում:

Սրա տղեն գընըմ ա քաղաքիցը տանձ առնըմ, մտքիցը ընգել էր, վեր հետը մեշոկիցրանից տանի, շլվարի փոխկերը պիմո կապըմ ա, ածըմ ա շալվարը ու գալի: Ավոտ չի ըլել, գատ չի ըլել. սա մըչ ոստով գընըմ ա քաղաք տանձն առնըմ գալի, տենըմ ա ապին մեռել ա: Կողքին կաղնըմ ա, լաց ըլըմ ու ասըմ ա. – Վի, ապի ջան, բա ես շլվարինս ով դի ուտիլ, վեր դու մեռար, բա ես ինչ անեմ, գոնյա կողմանայիր մըրև իմ գալն, էլի:

169. Երևանից մի մարդ Թումանյանով Ղսեղ ա գնում: Շամրին մի մարդու ա հանդիպում, հարցնում ա թե. – Ախատ, ո՞ւր ես գընըմ:

Սարդը պատասխանում ա թե. – Ղսեղ եմ գընըմ:

– Ախատ ջան, Ղսեղը լավ տեղ ա, քանի՞ տուն կըլնեն:

– Տաս, տասմերկու տուն կըլթեօ:

Որ գնում են գեղը հասնըմ, երևանցին տեսնում ա, որ մեծ գեղ ա. ասում ա. – Այ մարդ, բա ասեցիր տաս-տասմերկու տուն կա:

– Ես կրիշեն չիաշվեցի, լավ ապրողներին հաշվեցի:

170. Մի դմեղցու հարցնում են, ասում են. – Քեզի, Նիկոլայի վախտն էր լավը. թե ի՞րմի:

– Ի՞, Նիկոլայի շաշ հեռն եմ անըժել. նա աշխարհից ինչ գլխի ընգներ: Նա լիքը մեշոկը մի մանեթով ծախեր, դուք դարդակն էլ չեք մի մանեթով ծախըմ:

171. Խարագանց Շիջուկը սադ կյանքը Լոռվա ծորումը է ա արածացնում:

Շիջուկի ախյաթեր՝ Խսկանդարը մի օր իշրկից ա գընըմ, գարմանըմ ա. – Այ տա, Էսքան մարդը եստի, մեր Շիջուկի անգջնին թշշում ա:

172. Կոնոն մի օր գընըմ ա հանդը, տենում ա չոբանը տավարն արել ա հանդը, արածացնում ա, ինքը՝ քնած: Փետք քաշում ա, քնած չոբանին ջարդում: Չոբանը վեր ա թռնում: Կոնոն թե. – Այ մարդ, դարդս իո են չի, որ դու հանդն ես արածացնում, դարդս են ա, որ դարդակ ես քնել, կմրսես, կիհվանդանաս, կմրսես, կիհվանդանաս:

173. Կոնոն գնում ա Երևան, կառավարական շենքի առաջ կայնըմ ա, ծեռը մեկնում ա վեր, թե. – Այ տա, հիա, հիա, ոնց որ դաստնա շինած ըլած:

174. Թիլվիզում մի գեներալ կնգա, աղ-ջկերքի հետ գնալիս ա ըլում: Արանք տեսնում են մի կինտո լդար ծիու նստած գնում ա: Չին տակին լդարությունից ըրորվում ա: Աղջկերքը ծիծաղում են, ասում են. – Կարծես թե կինտոն լողկով լող տալուս ըլնի:

Գեներալը դիմում ա կինտոյին. – Կնատօ, կудա ունեաք?

Կինտոն ծիու պոչը րարձրցընըմ ա, ասում ա. – Զահօդե և կայու, սպօսու կապիտանա.

175. Լոռում մի տուն հարս են բերում հարսը թամբալ ա ըլում: Պատրոնը որ ասըմ ա, թե՝ տունը մաքուր չես պիզմ, հարսն էլ թե՝ տավար. ոչխարը շատ ա, հասգնում չեմ: Պատրոնը քիչ-քիչ ծախում ա տավար. ոչխարը և թողնըմ ա մի էշ: Մի օր պատրոնն ասըմ ա. – Ապրի հարսս, տուն ու դուքը լավ. լավ թամուգ ես պահըմ:

Հարսը երեխին ասըմ ա. – Ապնին ասա, բա որ էշն էլ ծախես, ինչքան թամուգ կպահեմ:

176. Վահագնեցի Ջոշնանց Բնժանը գալիս ա Կիրովական, ախպոր տղի տուն: Հարսն ասըմ ա. – Բիծա, որ իմանաս ինչ լավ բան են արել, շատ կգովես:

– Ասա, հարս ջան, ասըմ ա Բեթանը, – ասա, ինչ լավ բան ես արել:

Հարսն ասըմ ա. – Աշոտին (ամուսնուն) խմելն էլ եմ թարգ անել տվել, ծիսելն էլ:

Բեթանն ասըմ ա. – Դաա, հարս ջան, ինչ լավ բան ես արել, բա որ ուտելն էլ թարգ տալ տաս, բա քեզ ինչքան կսիրեմ...

177. Ղաեղցի Տեր Ջովհաննեսը գնում ա Քարինջ մեռել թաղելու: Մարցա ճանապարհին պատահում են գեղացիք:

– Օրինյա տեր, – ասում են գեղացիք, – տեր հայր, ես ո՞ւր առաջ բարի:

– Բարինջ:

– Խեր ըլի:

– Ինձ հմա խեր ա, համա տիրոջ տունը քանդվել ա, – սյատասխանում ա քահանան:

178. Ղաեղցի տղան հարց ա տալի թիլվիզեցի ծերունուն. – Բիծա, ինչի գլխիդ նազը սիպտակել ա, համա երեսինդ հիա սև ա:

– Գլխիս նազը երեսիս նազից քսան տարով մեծ ա, դրա հմա էլ թեզ սիպտակել ա, – ասում ա ծերունին:

179. Ակներցի նշանված տղեն ամռանը գընըմ ա Ուզունլար նշանածին տեսության: Նրա բախտիցը բոլոր տանեցիք կալումն էին, նշանածը տան րակն ա ավլում:

– Եղսո ջան, եդ ծերիդ ավիլն ուտեմ, – ասում ա տղեն:

— Այ տղա, իո իմ հորանց էշը չես, — վրա աբերում նշանաօթ:

180. Ղսեղի դպրոցում դասատուն պատմում ա տարվա եղանակների մասին՝ գարունը ծաղկեցընում ա ժառերն ու ծաղիկները, ամառը հասցընում ա բերքը, աշունը՝ բոլոր մրգերը, ծմեռը դաշտերը ծածկում ա սպիտակ ծածկոցով: Հանկարծ նա դառնում ա դեպի զրուց անող աշակերտին ու հարց ա տալիս. — Ալտեփանիկ, ուրեմն ե՞րբ է մրգերի հասնելու և քաղելու ժամանակը:

— Ընկեր Վարդանյան, մրգերը քաղելու հարմար ժամանակն է, երբ չունը կապած ա, պահակն էլ բաղում չի:

181. Վարպետը դարտակ բռնութամանը տալիս ա աշկերտին, ուղարկում րոնութի առնի:

— Բա փո՞ղը, — հարցնում ա աշկերտը:

— Չունարն անփող առնելն ա, թե չէ փողով ով ասես կառնի:

Աշկերտը եղ ա գալի, դարտակ րոնութամանը տալի վարպետին:

— Բա բռնութին:

— Էտա, քաշի, լիքը բռնութամանից ով ասես կքաշի:

182. Մեր գեղը մի մարդ ա ըլըմ, անունը Շամո: Շամոն ու հընգեզը իշաննին առաջ արած, գնում են անտառ փետ կտրսլու: Շամոն կացինը վե կալած վեր ա ըլլում մի սենծ ծառի, որ կտրի: Ոնց ա ըլլում, ոտի տակի ճուղը կոտըռում ա, Շամոն ընգնում ա ու մեռնում: Շնգերը մոտ ա գալի, տենում ա Շամոն վեր ընգած, փորումը շունչ չկա: Ասում ա. — Աղա Շամո, հըլա վի կաց, ենդար մեռել ես, վուը չես կարը մի էրկու խոսք ասի, կամ ենդար մեռել ես, վուը չես կարա՝ վի կենաս, էշին նստես, գընանք տուն:

183. Աի հազվեցի մարթ ու կնիկ են ըլըմ, ունենում են մի էշ: Դրանց էշը սատկըմ ա: Ասըմ են Ուզունլար իշի ծու են ծախըմ: Մարդը գնըմ ա խանութ:

Չմերուկ տեսած չի ըլըմ կենքումը, խափում են, թե՝ ծմերուկը իշի ծու ա: Դա մի ծմերուկ ա առնըմ իշի ծվի հաշվով: Վեր ա ունըմ ու ճամփա ընգնըմ: ճամփին հօքնըմ ա, նստըմ ա դինջանա:

Հանկարծ էդ ծմերուկը գլորվըմ ա ու գլորվելով գընըմ ա մի թիկի տալի: Էտ թիցը մի նապաստակ ա փախչըմ: Էտ մարթը եղնուց վագըմ ա ու կանչըմ. — Ղանաթ չունենք, դրա հընա ուգըմ չի գնամ: Բերեի, փախավ, եղնուցը վագեցի, չկարացի բռնեմ:

